ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Կարեն Ալավերդյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Բուխարեստ (Ռումինիայի Հանրապետություն), 2024 թ. հոկտեմբերի 21 – 24-ը

3. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի (CFRR) կողմից կազմակերպված՝ «Արձագանքելով կորպորատիվ ֆինանսական և կայունության հաշվետվողականության նոր պահանջներին ու մարտահրավերներին» խորագրով միջոցառմանը:

5. Քննարկված թեմաները

- Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրությունը Ռումինիայում
- ԵՄ անդամ երկրների փորձը. Ռումինիայի աուդիտի որակի վերահսկողության համակարգի նկարագրությունը
- Սերբիայի փորձը հանրային վերահսկողության և որակի ապահովման համակարգի ստեղծման գործում:
- Արհեստական բանականության (AI) դերն ու ազդեցությունը աուդիտի, հանրային վերահսկողության և որակի ապահովման գործընթացներում

- Աուդիտի որակի բարելավումը տարածաշրջանային համագործակցության միջոցով

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց Ռումինիայի պարտադիր աուդիտի նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող մարմնի (ASPAAS) առաքելության, ինչպես նաև հիմնական դերերի ու պարտականությունների համառոտ ակնարկ: Այն ներառել է այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են այդ մարմնի ֆինանսավորումը, խորհրդի անդամների առաջադրումը, անձնակազմի հավաքագրումը, շուկայի մշտադիտարկումը և միջազգային համագործակցությունը: Ներկայացվել է նաև տեղեկատվություն Ռումինիայում աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների գրանցման և աուդիտորների համար շարունակական մասնագիտական կրթության պահանջների մասին: Քննարկվել են նաև Ռումինիայի ֆինանսական աուդիտորների պալատին (CAFR) որոշ գործառույթների պատվիրակման պայմանները, ներառյալ՝ ASPAAS-ի դերը պատվիրակված գործառույթների մշտադիտարկման հարցում:

Աշխատաժողովում մանրամասն ներկայացվել է նաև ASPAAS-ի մոտեցումը աուդիտորների և աուդիտորական ընկերությունների ստուգումների նկատմամբ: Մասնավորապես, ներկայացվել է գործող օրենսդրական դաշտը և ընդհանուր մոտեցումներ՝ կապված որակի ստուգումների և տեսչական շրջափուլերի կազմակերպման, ASPAAS-ի կողմից ստուգումներից հետո հետագա գործողությունների և հանրային հաշվետվողականության հետ: Մանրամասն քննարկել են որակի վերահսկողության հետ կապված տեխնիկական մանրամասները, ներառյալ ստուգումների նախապատրաստումը, ստուգումների ընթացքում ռիսկի վրա հիմնված մոտեցմամբ աուդիտների վերանայումը, ստուգումների ժամանակ օգտագործվող մեթոդաբանությունը, առաջադրանքների վերանայումը, որակի ներքին վերահսկողության վերանայումը, ASPAAS-ի արդյունքների գնահատումը (գործնական օրինակների հղումով), վերջնական գնահատումը և հետաքննության գործընթացը:

Առանձին անդրադարձ է կատարվել արհեստական բանականության օգտագործման հնարավորություններին՝ օրինակներով և դրա պոտենցիալ ազդեցությունը մասնագիտության և աուդիտորների վրա՝ թե ինչպես է ԱԲ-ն օգտագործվում աուդիտի գործընթացներին աջակցելու համար, և նաև հաճախորդների կողմից ԱԲ-ի օգտագործման պարագայում ֆինանսական աուդիտի ընթացքում կիրառվող մոտեցումների կարևորությունը: Քննարկվել են նաև ԱԲ-ի կիրառման ժամանակ էթիկական և կարգավորող որոշ նկատառումներ: Բացի

այդ, ներկայացվել են նաև այլ նորամուծություններ, որոնք ազդում են աուդիտի ապագայի և տեխնոլոգիաների օգտագործման վրա:

Տարածաշրջանային համագործակցության համատեքստում գործնական քննարկման ընթացքում ներկայացվել է Հայաստանում աուդիտի որակի գնահատումների վերաբերյալ համառոտ տեղեկատվության: Վերջինիս նպատակն է սովորել միմյանց փորձից՝ բարձրացնելու ստուգումների որակը, ինչը կհանգեցնի ավելի որակյալ աուդիտների և ֆինանսական տեղեկատվության առկայության:

Քննարկված գործնական ասպեկտները ներառել են.

1. Ռիսկի գործոնները, որոնք հաշվի են առնվում աուդիտորական կազմակերպությունների և աուդիտի ֆայլերի ընտրության ժամանակ.

2. Որակի արտաքին գնահատումների հիմնական բացահայտումները և դրանց հետ կապված թերությունների վերացման գործողությունները. և

3. Ինչպես են ստուգումների արդյունքները հաղորդակցվում ստուգվող աուդիտորական ընկերություններին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հոկտեմբերի 29, 2024թ.